

ալ կան այս յիշատակարանաց մէջ ու  
րոց միայն հնչումներն ուղղելով բուն  
հայ կերպարանքը կ'զգենուն : Մեծ  
խնդիր մ'ալ այս է թէ 2800 տարի  
առաջ բուն իսկ հայ բառերը ինչ  
հնչում ունէին, ինքեցողին թողով  
այս բանասիրական ինդիրը, կը փու-  
թամբ հոս արձանագրութեանց բա-  
ռերուն մէկ քանի հատը յիշել :

- |          |                       |
|----------|-----------------------|
| Ղարի     | Ղերի                  |
| Ուրու    | Որ (յարաբ. դերա)      |
| Ուրիի    | Իւր                   |
| Շինհոացի | Շինեցի (եռու շինել)   |
| Ման      | Ման                   |
| Տանիմի   | Տան իմոյ              |
| Վրա      | Վերայ                 |
| Իսդիստան | Մպաստան               |
| Շիու     | Չուել                 |
| Հուս     | Հիւսել (գործել շինել) |
| Մրման    | Հրաման                |
| Եիզ      | Ես                    |

Տարակոյս չըմտար որ Հայաստան  
Հայկազանց ժամանակը Հայաստան  
չէր կոչուեր, ինչպէս որ այս արձանա-  
գրութիւններն ալ կը վկայեն թէ  
Հայաստանի մէջ քանի մը ուրիշ աւ-  
րութիւններ ալ կային, բայց ընդ իշ-  
խանութեամբ միոյ թագաւորի : Բոս  
յիշատակարանաց Պիամա կը կոչուէր  
մեր բնիկ երկիրը և ոչ թէ Հայաս-  
տան կամ Մրմենիստան, ինչո՞ւ ու-  
րեմն Պրամայի փառքը Հայաստանէն  
դուրս համարինք . . . . :

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԱՍԻՍԱՆՆԵՐ

Ա- Էիւրեյականն Օրագրի,  
(Իի- 665) :

Կարդացինք ձեր յօդուածը, զոր  
կը գրէք ՍԻՕՆԻ «Սիոն-Իիան Իսիո-  
ղիտոն-Իիան Հայաստանեայց Եիւրեյ-ոյ »

վերնագրով խորհրդածութեան դէմ  
կը ցու իմք, որ ՍԻՕՆԻ յօդուածոյն աւ  
բողջ պարունակութիւնն անտեսու-  
թեան տարով և միակողմանի կերպիւ  
դատելով դայթակղած էք միամտա-  
բար : Բուք մի կաթողիկոս կ'ընդու-  
նիք, բայց Եկեղեցւոյ քահանայու-  
թիւնը, եպիսկոպոսութիւնը, ժողո-  
ղրդական մարմինը, դաւանութիւնը  
և ծիսակատարութիւնքը կը բաժնէք,  
այսինքն տարբերութիւն կը տեսնէք  
ԼՂմիածնի և Սոյ եպիսկոպոսութեան,  
նոյն եպիսկոպոսութեամբ ձեռնադ-  
րուած քահանայութեան, նոյն քա-  
հանայութեամբ մատակարարուած  
խորհրդոց և հետեւապէս նոյն խոր-  
հրդներով ծնուած, սնուած և զար-  
գացած ժողովրդական մարմնոյն, այս  
ինքն հաւատացելոց միութեան մէջ :  
ՍԻՕՆ երկու կամ երեք կաթողիկոսներ  
կ'ընդունի, բայց ամենեւին չը բաժ-  
ներ կաթողիկոսութիւնը, եպիսկոպո-  
սութիւնը, քահանայութիւնը, դա-  
ւանութիւնն, արարողութիւնքն և  
հետեւապէս Եկեղեցւոյ կամ հաւա-  
տացելոց միութիւնը, ինչպէս և նոյն  
իսկ հաւատացեալք բնաւ երբէք չեն  
բաժնած, չեն խորած և չեն պառակ-  
տած ՚ի դարաւ որ ժամանակաց հետէ :  
Ինքեցողաց թողունք դատել ՍԻՕՆԻ  
և ձեր նայուածքն կաթողիկոսութեան  
ինդրոյն նկատմամբ, թէ ո՞րն օգտաւ  
կար է և ո՞րն վնասակար և անցնինք  
ուրիշ առարկութեան :

Բուք կաթողիկոսութիւնը՝ նա-  
խագահութիւն մեկնելով կը հետեւ-  
ցնէք, որ մի և նոյն ժամանակ երկու  
կամ երեք նախագահներ կարող չեն  
լինիր : (Ուրախ եմք, որ Եկեղեցւոյն  
մի Վրուխ ընդունելով, որ է Յիսուս  
Վրիտոս, կաթողիկոսները՝ պլուրիներ  
չէք հասկնար, ապա թէ ոչ հռովմեա-  
դաւանից նման անշուշտ պիտի ոլըն

դէիք թէ՛ մի մարմնոյն երկու կամ երեք գլուխներ կարող չեն լինիր) : Բայց ներեցէք մեզ ասել, որ նախա- գահութեան նկատմամբ թէ՛ ՍԻՕՆ և թէ՛ Երեսփոխանական Ժողովն բնաւ երբէք ուրացած չեն Երմիածնի կաթողիկոսի նախագահութիւնն : Այն որ ընդհանուր կաթողիկոսի անուն կը կրէ, հարկաւ, եթէ երբ և իցէ ընդ- հանուր եկեղեցական — ազգային Ժողով գումարուի ( որուն այժմ ամեմենեւին պէտք չը կայ ) նախագահն կամ նախաթոռն ինքն է : Հետեւապէս, Եկեղեցւոյ և Ազգի միութեան փախարղներն նախագահութիւնն չէ, որ կը մերժեն, այլ հակաթոռութիւնն : Այսան զի՛ հակաթոռութեան գաղափարն բաժանում և երկպառակութիւն կ'ենթադրէ Եկեղեցւոյ զաւակաց և իրենց դաւանած հաւատալեաց մէջ, որ բարեբաղդաբար մինչեւ ցարգ տեղի ունեցած չէ . իսկ եթէ այսուհետեւ լինին մարդիկ, որ հակաթոռութիւն, հակաթոռութիւն գոչելով պիտորեն Եկեղեցւոյ զաւակաց մտքերն, և հակաթոռութենէն՝ Հակապոթիւն և Հայոթիւն արտադրելով երկպառակեն Ազգային հոգեւոր միութիւնը, անշուշտ սեւազիր պիտի դրոշմուին իրենց անուններն պատմութեան մէջ, զոր և գուր, Աժժ. Եկեղեցական, ձեր ակնկալութեան հակառակ, անշուշտ վերջէն պիտի սփայտի- իրարալ, ձեր կարծեցեալ Բաբրէն ակննդնիդ փոյծ ելլալէն զինի : Բայց զիտէք հարկաւ, թէ ի՞նչ կերպով կը կարգացուին խոսիլութեան որոմնացաններու և երկպառակիչներու անունները պատմութեան մէջ :

Դուք, ըստ ձեր համոզման, տրամաբանութեան սիրահար լինելով և ՍԻՕՆԻ քարոզած աւետարանական ըսկըրուներու մէջ բողոքականու-

թիւն երազելով կը խորհէք Ս. Վրաքէն, և ձեր տրամաբանութեամբն լուծել կամիք ամեն խնդիր : Բայց շատ մի վստահիք ձեր տրամաբանութեան վրայ, այլ, եթէ կ'ընդունիք մեր խորհուրդը, խոնարհեցէք դէպ ՚ի Վեետարանն, ուսէք և ուսուցէք Վեետարանը . վասն զի ձեր դժուարալոյծ կարծուած խնդիրներն իսկ դիւրաւ կը լուծուին Վեետարանով, ինչպէս և լուծուած են շատ և շատ խոնդիրներ, որք բոլորովին անլուծանելի էին տրամաբանութեան համար : Արտեսներ անշուշտ, թէ Պապականութիւնն՝ Վեետարանէն հեռանալով և իշխանասիրութեան ու գահասիրութեան եռանդէն մղուելով, ուր հասաւ և ի՞նչ դատաւճիռ ընդունեց մարդկութեան լուսամիտ մասէն : Կի թէ այլոց փորձը զգուշութեան մի շահաւէտ խրատ չէ՞ ամենուն համար, որոնք գիտեն օգուտ քաղել ազգաց պատմութենէն :

Ա. Փոփն, Ի. 708 :

ՍԻՕՆ հայցոյցած չէ զձեզ, այլ երկուց Արքազան Պատրիարքաց դէմ ձեր անիրաւ ամբաստանութիւնը քննադատելով՝ սրտասխանատուութեան ենթարկած է զձեզ :

Դուք պատասխանատուութենէ փախելու համար՝ կը թողուք վեճաբանութեան առարկան, որ էր, ըստ ձեր անհեթեթ զրախօսութեան երկուց Պատրիարքաց Բաշիպոթիւնն Եկեղեցւոյ Բարոյապետ Մեդիելու և Բարոյներն ու Եկեղեցիներն փոյելու համար, և բոլորովին նոր երազներ երազելով, կը խօսիք Երուսաղէմի կանոնագրութեան, Ժողովոց կազմութեան և

պարտուց վրայ : Բայց մի կարծէք թէ ՍԻՕՆ դիւրաւ կը թողու զձեզ, որ այդպէս, քնաշըջիկի նման անգիտաբար թափառիք, առանց իմանալու՝ թէ ո՞ւր էիք և ո՞ւր հասաք : Կը յիշեցնենք ձեզ վերապիս ձեր 699 թուով հրատարակած ամբաստանութիւնը և կը պահանջենք որ սթափիք և պատասխանէք մեզ՝ թէ երբ և ինչպէս Գաղտնիք եղած են երկու պարտաւորներն Նիւ-Կիւպրոսի ազգային բարոյապէս մեղմելու համար : Երբ և ինչպէս Ռուսիոյ եղած են նոյն վեճակի Գաղտնիքն և Եփեսոսիցիներն գոյելու համար : Ի՞նչ հիմամբ կ'ամբաստանէք նաև Նիւ-Կիւպրոսի համարէն Սիւրբանութիւնն իբրև անարժան առաջնորդութեան : Կը պահանջենք և խտիր կը պահանջենք, որ կամ փաստերով հաստատէք և կամ հրապարակաւ յետս կը կոչէք ձեր այս յանդուգն վատահամբաւութիւնն : Եթէ դարձեալ փախուստ տաք, որ խիստ հաւանական է, և մի այլ առարկայ ձեռք առնուք, իմացած լինիք կանխաւ, որ ՍԻՕՆԵՆ միշտ կընդունիք ՍԱՌՆ ԱՐՀԱՄԱՐՀԱՆԲ, որ ամեն ստաբրորդ և զբախտութիւններու արդար պատիժն է : Իսկ եթէ զիջանիք հարցնելու՝ թէ ինչո՞ւ կ'արհամարհուիք և անարժան կը դատուիք, ՍԻՕՆ չը զանար հիմնաւոր փաստերով պատասխանել ձեր կէդիկ փողերոն, որով բարիք մը եւս ըրած կը լինի թէ՛ ձեզ և թէ՛ այն պարզամիտներուն, որոնք գուցէ կը դայթափըն ձեր հրատարակութեամբ :

ՀԱՆԴԷՍ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ս • ՎԱՐԴԱՆԱՆՑ  
ԵՒ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ  
Ս • ԱԹՈՌՈՑՈՅՍ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ տօնախմբութիւնը կրօնական շքեղ հանդիսիւ տօնակէի՛ն յետոյ, նոցա անմահ յիշատակին և միանգամայն Եսաանգաւորաց Վարժարանի Տարեդարձին առթիւ, վայելուչ հանդէս մի եւս կատարուեցաւ Վարժարանի մէջ, դպրոցական վեցամսեայ մասնաւոր հարցարնութեանէն ղինի : Սոյն հանդիսին ներկայ էին Մ.մեն. Սրբազան Պատրիարքարքն, Սիւրբանական Ռեկտիս Գեր, Հարք և Եղբարք և համարէն Ռեկտաւորք՝ արք և կանայք, Հանդիսին մէջ ատենախօսեցին ուսուսչաց դասէն Մ.ազ Սարկաւազ Գարբիէլ Խոսպտեան, իսկ աշակերտաց մէջէն՝ Գեորգ Տ. Զարու թիւնեան Իսմայէլցի, Թաքէոր Գրիգորեան Ընդրիանու պօլսեցի : Գաղղիարէն ևս կարդացուեցան մի ճառ և բանի մի առարկներ, ինչպէս և կատարուեցան երկու հայերէն տրամախօսական համառօտ արարուածներ, զորս շարագրած էին աշակերտներէն՝ Պօղոս Զակոբեան և Կարոպետ Թովմասեան Չանազ - Գաղեցիք : Հանդէսն կնքուեցաւ յորդորական բանիւ և օրհնութեամբ Մ.մեն. Սրբազան Պատրիարքին :

Մրժան կը համարինք հրատարակութեամբ հաղորդել ընթերցողաց Բարեշնորհ Գարբիէլ Մ.ազ Սարկաւազի Ըտենախօսութիւնն, որ է հետեւեալն :